

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի.

Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ է Ք օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են

խաղաղութիւնը բաւին 2 կոպէկ.

Տ է Լ է Ք օ ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ի Ր Գ Ի Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Խալամ և պրոգրէս. Հեռագիրներ. Բրայտօնի ընդհանուր ժողովի վճիռները. Օրվայ հարցը. Հայոց հարցը և դիպլոմատիան. Ֆետի բէյ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Այսօրեան արքայական սի յօդուները. Նամակ Բաթումից. Նամակ Սոֆիա քաղաքից. Նամակ Խաղաղութիւնից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Նամակ Եփեսոսից. Հեռագիրներ. ԲՈՎԱՆ. ՏԱՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիֆլիսից.

ԻՍԼԱՄ ԵՒ ՊՐՕԳՐԵՍ

III

Իր գոյութեան առաջին դարում իսլամը ոչ մի գաղափար չուներ գերաբարեկամի, փիլիսոփայութեան և գիտութեան մասին: Ղուրանը արգելել էր պատկերներ, նկարներ և արձաններ ունենալ. նա արգելել էր և երաժշտութիւնը: «Ասել երաժշտութիւնը, ասում է նա, մեղք է, իսկ նրանով զբաղվելը—անառակութիւն է»:

Այդպիսի հասկացողութիւնը, ի հարկէ, միանգամայն հարաձուգ էր գերաբարեկամի, իսկ գերաբարեկամի բացակայութիւնը առաջ է բերում ճշմարտութեան և բարութեան իդէալների և վերացական գաղափարների բացակայութիւնը:

Ամեն բան զուրանի մէջ չոր, սառն և զործնական է: Այն հինգ կանոնական «սիւները», որոնք իսլամի, իբրև կրօնի, հիմնաքարն են կազմում—ճուշդ զննելը, լուսացումը, արթնքը, ուստադնացութիւնը և ողորմութիւնն առաջ—բոլորն էլ չոր ու ցամաք ծէսեր են, առանց հոգու, առանց բարոյական բարձր պահանջների մասնակցութեան:

«Ղուրանի Աստուածը, ասում է հոգևորական արեւելագետ Միւլլերը, մի չար բռնապետ է, մարդը նրա ստրուկն է, մուսուլմանի աղօթքը ներշնչված է երկիւղով և սարսափով ամեն բան նախասահմանող Ալլայի անհուն մեծութեան առաջ»:

Խալամի, իբրև կրօնի, ամբողջ էությունը ամբողջված է հետեւեալ երկու զօգմաններով: Երկուսն էլ ընդհանուր է իբրև յաւիտեական և անփոփոխ ճշմարտութիւն: «Չը կայ Ալլահ բացի Ալլահից» և «Ամեն բան նախասահմանված է Ալլահից»: Վերջին վարդապետութիւնը ուղղակի ամբողջութեան է դասապարտում մարդկային միտքը. միթէ՞ այդ միտքը կարող է ստեղծագործել, արտադրել մի բան, քանի որ ամեն ինչ ա-

ռաջուց ստեղծագործված, արտադրված է Ալլահից: Այդ պատճառով իսլամը ընդունում է գիտութիւնը այն չափով, որ չափով նա չէ հակասում այդ կրօնի վարդապետութեան և պատուիրաններին և համարում է գիտութիւնը իբրև «կրօնի հնազանդ դուստրը»:

Մեզ կարող են ասել այն առարկել. թէ ինչու ռեբեմն բացատրել այն մտաւոր շարժումը, որ սկսվեց 750 թիւին Աբբասեան խալիֆաների ժամանակ և տեղի գրեթէ ամբողջ 5 դար (750—1250), մի շարժում, որի ժամանակ մտքի ազատութիւնը այնքան ծաղկեց, որ Բագդադում և այլ կենտրոններում փիլիսոփայները հրապարակապէս ժողովներ էին կազմում և քննարկում էին նոյն իսկ կրօնը մի քանի սկզբունքներին համաձայն:

Պէտք է ասել, որ այդ շարժումը սկսվեց և աճեց հին պարսկական քաղաքակրթութեան ազդեցութեան տակ, Բիզանդիայից քարոզված փիլիսոփայների ձեռքով: Պարսիկ, յայն և հրէայ փիլիսոփայներ Աբբասեան խալիֆաների, մանաւանդ հոգևորական մեկենաս Մամունի պաշտպանութեան ներքոյ, թարգմանեցին արաբերէն ամբողջ յունական գիտութիւնը և այդ պաշտպանութիւնը այնքան առաջ դնաց, որ մի ժամանակ լուսաւոր միտքը պահպանվում և աւանդվում էր միայն իսլամ երկրներում: Սակայն այդ կուլտուրան արաբական էր միայն լեզուով. ըստ բովանդակութեան՝ նա յունական էր և արաբները, պարսիկները, յոյները և հրէաները օգնութեամբ, միայն փոխարոյնը հանդիսացան և յանձնելով այդ կուլտուրան Եւրոպային, անհետացան քաղաքակրթութեան և ընդհանուր կուլտուրայի ասպարիզից: Թէ այդ կուլտուրան, որ կոչվում է արաբական շրջան, դասապարտվում և անխնայ հալածվում էր իսլամ աստուածաբանների կողմից, դրա ապացոյցն այն է, որ Մամուն խալիֆան երկարատեւ փնջ անէծքի և նրա առաջ բերած մոտաւոր շարժումը դասապարտվեց յաւիտեական նշովի իսլամ դաւանաբանների կողմից, իբրև հերձուած:

Հոգևորական էրնեսա Բընսան, որին չէ կարելի համարել քրիստոնէութեան կողմնակից, ամենաբարեկամը և անաչառ կերպով ուսումնասիրելով իսլամը և նրա դէպքի պրոգրէսը, գիտութիւնը և քաղաքակրթութիւնը անհաղթաբար անկարող ու սակաւակիւ հայ անհատներու և թէ Եւրոպական քանի մը լրագրիներու կողմէ այն խնդրին առթիւ երեւակայութեամբ մէջ կարգ մը լուրեր ստեղծելով սուտ ու սխալ հրատարակութիւններ կընեն: Մանաւանդ այս միջոցին հայ հասարակութեան պատկանող և ամենափոքր թիւ մը կազմող մէկ քանի կարճամիտներ, զորս նոյն հասարակութեան ամենամեծ մասը կայացան, ապերախտ վարմունքի ու ընթացքի մէջ գտնուած են, ինչ որ կը լսուի թէ ժողովրդին մէջ այլ և այլ տարածւածութեան ծնունդ տուած է: Չարմաբոյ լսուած է թէ այդ զրոյցներու մէջ անգոյ և տարօրինակ գաղափարներ ալ ծագած են, որպէս թէ Եւրոպա պաշտպանի աշըով կը նայի մէկ քանի անձանց վերջին անգամ ունեցած ըմբոստական ընթացքին և թէ հետեւեալ հայ ազգին իշխանապետութիւն կամ ինքնօրինութիւն և կամ վարչական առանձնաշնորհութիւններ պիտի տրուին:

«Բայց թէ ժողովրդին մէջ չըլած, թէ բարին

թիւնը ունեցած յարաբերութիւնը, երկու անգամ, 20 տարեկան ընդմիջումով, արտասանել է իր հեղինակաւոր վճիռը իսլամի մասին:

«Խալամը, գրեց նա 1862 թիւին, Եւրոպայի լիակատար հերքումն է, զգուսնը դէպի գիտութիւնը, ընդունն քաղաքացիական հասարակութեան: Խալամը—սէմիտական ոգու այն զարհուրելի պարզութիւնն է, որ ճշնում է մարդկային ուղեղը, փափում է նրա առաջ մուտքը դէպի մտքի ճկունութիւնը և քննութիւնը, դէպի ամեն մի նուրբ զգացում, դէպի ամեն մի քննադատական հետազոտութիւն և զրա փոխադէն դնում է նրա առաջ յաւիտեական տաւառ օգիտ—Չը կայ Ալլահ բացի Ալլահից և ամեն բան նախասահմանված է Ալլահից»:

«Խալամը, ասաց Բընսանը 20 տարի յետոյ, 1883 թիւին, ամենաճանր շղթան է, որով երբ և ինչ մարդկութիւնը կաշկանդել է: Ամենքին զարմացնում է ամեն մի մուսուլմանի անխուսափելի սահմանափակ միտքը: Մուսուլմանը ամենախոր ատելութիւն է զգում դէպի քաղաքակրթութիւնը, դէպի գիտութիւնը, մի խօսքով այն ամենը, ինչից կազմվում է եւրոպացու միտքը»:

Բընսանի այս գեղեցիկ խօսքերով մենք կը վերջացնենք մեր յարաւոր: Այդ հանձնարարութիւնը մասհից յետոյ էլ նրա յայտնած միտքը աւելի և աւելի է հաստատվում: Կրան ապացոյց—Թիբեթից նոր պատմութիւնը: Որտեղ թագաւորում է իսլամը, այնտեղ չէ կարող լինել պրոգրէս:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(Խուսաց գործակալութիւնից)

Կ. Պ օ լ ի ս, 14 հոկտեմբերի: Երգնկայում տեղի ունեցան անկարգութիւններ: Սպանված են 60 հայեր: Թիբեթաց կառավարութիւնը յայտարարում է, որ խառնակութիւնների պատճառը հայերն են: Մարաշում նոյնպէս տեղի ունեցան խառնակութիւններ:

Լ օ ն դ օ ն, 14 հոկտեմբերի: «Standard» լրագրին Կ. Պ օ լ ի ս շարդրում է, որ իբր թէ «Երեսօրհանը Թիբեթի» կուսակցութեան ձեռքակալված 50 պարագլուխներին,

քննութիւնից յետոյ, տարան զինուորական նաւով և ծովը զննեցին:

Վարնա, 14 հոկտեմբերի: Սուլթանը և ծովային մինիստրը սպանական նամակներ ստացան:

Կ. Պ օ լ ի ս, 14 հոկտեմբերի: Սուլթանը, ընդունելով անգլիական դեսպանին, յայտնեց, որ հաստատ վճել է իրադրծել հայոց ընթացիկները: Մեծ վիզիրը նոյնպիսի ապահովութիւններ տուց:

Բ. Կրան անգլիկութիւններին համեմատ, ասիական բոլոր նահանգներում հանդուստութիւնը վերականգնված է, բացի Մարաշի շրջանից:

ԲԻՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՎՃԻՌՆԵՐԸ

Անգլիայի Բրայտօն քաղաքում հոկտեմբերի 3-ին կայացած նէօ-կոնֆորմիստների ընդհանուր ժողովը, ի թիւս ուրիշ խնդիրների, զբաղվեց նաև հայոց խնդրով և միաձայն ընդունեց հետեւեալ վճիռները.

«Ներկայ ժողովը հանդիսաւոր կերպով նորոգում է իր դարացկոտ բողոքը թիւրք կառավարութեան անդաճմութեան և կեղծութեան դէմ, նրա անդադար խուսափողանքութիւններին և այն դաժանային բռնաբարութիւններին դէմ, որոնց ենթակայ է Հայաստանի քրիստոնէայ աղաքանկութիւնը:

«Ներկայ ժողովը յիշեցնում է Նորին Վեհափառութեան մինիստրներին, մանաւանդ արտաքին գործերի մինիստրներին, որ 1878 թ. յուլիսի 4-ի Կիւթոսի դաշնագրով, ինչպէս և Անգլիայի, Պրանսիայի և Ռուսաստանի համաբաշխ գործակցութիւնը վերջին ժամանակներում ընթացիկներ առաջարկելու խնդրի մէջ, ծնեցրել է հայերի մէջ օգնութեան յոյս, որը չէ կարող իրականանալ առանց եւրոպական պետութիւնների միջամտութեան, ի մեծ ամօթ Թիբեթից: «Ժողովը կարծում է, որ յետաձգելով մի չուստփոյթ դարման գտնել և վերջ տալ մեր ժամանակի ամենախայտառակ վարմունքներին, զրանով կարելի է բարձրել շատ տեղերում մի խորամտութեամբ վրէժնորութեան ոգի, որը, եթէ չը հանդիմանի, պէտք է ձգտի ամենամանկապէս կերպով ջնջել արեւմտեան թիւրքերին քաղաքակրթի ազգերի շարքից:

«Անյետաձգելի պահանջ է Հայաստանի համար

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ն Ա Ս Ա Կ Թ Ի Ի Ր Գ Ի Ր Ա Յ Ի Յ

Կ. Պ օ լ ի ս, հոկտեմբերի 7-ին

Ծրագրին ընդունելութեան խնդիրը վերջացած է: Հինգաթիւ իրիկուն սուլթանը վաւերացուց այդ ծրագիրը. բայց թէ ինչ փոփոխութիւններ եղած են, դեռ որոշ չենք գիտեր. քոմիտեի խնդիրը յայտնի չէ թէ ինչ եղաւ. կը կարծուի թէ դեսպաններու հակադրութիւնը պիտի ըլլայ Պօլսոյ եօթը հոգիէ բաղկացած քոմիտեին վրա:

Ուրբաթ օր երեք դեսպանատուններու թարգմանները պարփարքին մօտ գացին, և դասական խնդիրներու վրա խօսելով հանդերձ իմացուցին թէ կայսերական իրազէով ծրագիրը ընդունուած է:

Ժողովուրդը թէն շատ ուրախ պէտք էր ըլլալ այս լուրին համար, սակայն ճրպիկոյնի կոտորածին լուրը, որ հետզհետէ կը տարածուի, ամենամեծ տխրութիւն պատճառած է: Շուարումը ընդհանուր է:

Թիւրք թերթերը երկու օր իրարու վրա յօ-

դուածներ հրատարակեցին պատրաստելու համար ժողովուրդը բարենորոգումներու գաղափարին: Ահա ներկայից կը զրկուի ձեզ «Ստապահի» և «Իզդուարի» յօդուածները:

«ՍՍԱՊԱՀԻ» ԾՈՒՈՒՆՈՒՐԸ

«Ժամանակէ մը ի վեր «Հայկական խնդիր» անունով խնդիր մը ծագած է: Այս մասին իրաց վիճակին չը պատասխանող տեսակ տեսակ ստույթիւններ կը հրատարակուին քննադատաբար: Եւրոպական լրագրիներն ալ իրենց երեւակայութեամբ մէջ կարգ մը լուրեր ստեղծելով սուտ ու սխալ հրատարակութիւններ կընեն: Մանաւանդ այս միջոցին հայ հասարակութեան պատկանող և ամենափոքր թիւ մը կազմող մէկ քանի կարճամիտներ, զորս նոյն հասարակութեան ամենամեծ մասը կայացան, ապերախտ վարմունքի ու ընթացքի մէջ գտնուած են, ինչ որ կը լսուի թէ ժողովրդին մէջ այլ և այլ տարածւածութեան ծնունդ տուած է: Չարմաբոյ լսուած է թէ այդ զրոյցներու մէջ անգոյ և տարօրինակ գաղափարներ ալ ծագած են, որպէս թէ Եւրոպա պաշտպանի աշըով կը նայի մէկ քանի անձանց վերջին անգամ ունեցած ըմբոստական ընթացքին և թէ հետեւեալ հայ ազգին իշխանապետութիւն կամ ինքնօրինութիւն և կամ վարչական առանձնաշնորհութիւններ պիտի տրուին:

«Բայց թէ ժողովրդին մէջ չըլած, թէ բարին

չարէն զանազանելու անկարող ու սակաւակիւ հայ անհատներու և թէ Եւրոպական քանի մը լրագրիներու կողմէ այն խնդրին առթիւ երեւակայութեամբ մէջ կարգ մը լուրեր ստեղծելով սուտ ու սխալ հրատարակութիւններ կընեն: Մանաւանդ այս միջոցին հայ հասարակութեան պատկանող և ամենափոքր թիւ մը կազմող մէկ քանի կարճամիտներ, զորս նոյն հասարակութեան ամենամեծ մասը կայացան, ապերախտ վարմունքի ու ընթացքի մէջ գտնուած են, ինչ որ կը լսուի թէ ժողովրդին մէջ այլ և այլ տարածւածութեան ծնունդ տուած է: Չարմաբոյ լսուած է թէ այդ զրոյցներու մէջ անգոյ և տարօրինակ գաղափարներ ալ ծագած են, որպէս թէ Եւրոպա պաշտպանի աշըով կը նայի մէկ քանի անձանց վերջին անգամ ունեցած ըմբոստական ընթացքին և թէ հետեւեալ հայ ազգին իշխանապետութիւն կամ ինքնօրինութիւն և կամ վարչական առանձնաշնորհութիւններ պիտի տրուին:

«Գալով ըստ ճշմարտութեան, Վեհ. Սուլթանը, որուն կեանքի և փառքի երկայնութիւնը հնորէն բարձրեալն Աստուած, ի վաղուց անտի կը փափար, որ իր ամէն կայս. հպատակները՝ ժամա-

նակին պահանջմանց համաձայն՝ վիճակի բարձրացում ու երջանկութիւն ունենան և իր կայս. երկիրներու ընդարձակութիւնն ի նկատի առնելով անանց հաղթարտ եղած բարենորոգումներն ի գործ դրուին: Կը լսուի թէ Ն. Կ. Վեհափառութիւնը իր հանրութեան գլխած հայր մը ըլլալը ցոյց տալու հպատակասիրական նուիրական նպատակաւ նկատողութեան առած է հետեւեալները.

«Խաղաղութիւնը տեղի ու նահանգի ընդունակութեան, ժողովրդին խառնուածքին ու բնութեանը և ժամանակին ու վիճակին պահանջմանց համաձայն, ոտովկանութիւնը ու ոտովկան-զինուորութիւնը աւելցնել, ու բարեկարգել վարչական ու դատական մասը բարենորոգել և կառավարութեան նպատակին համապատասխանող բարենորոգումներն ու յառաջդիմութիւններն ընդարձակել, այն կերպով որ կայս. նահանգներուն ընդհանուրին համար ի գործ դրուի և Կիւլիանէի խաթիւնը Հիւսայունէն մինչև այսօր ի գործադրութեան եղող օրէնքներուն և կանոններուն չըջանակն մէջ ըլլան և Առաջօրէն ընդարձակ երկիրներու կայս. նահանգներին բարենորոգումները սկսին: Վերջապէս աւելցնել այն զանազան տեսակ հնորհները, զորս իր բոլոր կայս. հաւատարմ հպատակները կը վայելեն առանց բացառութեան:

մի բարձր կոմիտեի միջոցով, որը ոչ թիւրք պաշտօնակալ լինի, ոչ էլ թիւրքաց հաւատակ և որը կարողանայ պաշտպանել երկրի քրիստոնէական ազգաբնակչութիւնը և պատասխանատու լինի եւրոպական պետութիւնների առաջը:

Այդ վճիռը յետոյ վերադառնալիս Մեզարիսի Մօրը մի բանաձև առաջարկեց, որ նոյնպէս միաձայն ընդունվեց: Նա ասեց, որ մի քանի զըլ-խաւոր լրագրիւնների չնորհիւ, սարսափելի մեղադրանքները ստուգվել են, և այժմ եթէ պետութիւնները չեն կամենում միասին գործել, Անդլիան պէտք է ինքն միայնակ գործէ: Լօրդ Սօլսբիւրին ինչ բայց և անի զրա համար, իր հետ կունենայ ոչ միայն նէօ-կօնֆօրմիստների, այլ ամբողջ ազգի համակրութիւնը:

ՕՐԱՅՈՒՆ ՀԱՐՅՈՐ
XXXVII

Աւելորդ չենք համարում մեր անցեալ յօդուածին աւելացնել մի քանի վատտեր:

Այդ յօդուածի մէջ այն կարծիքը յայտնեցինք, որ սուտ և սխալ է այն լուրը, թէ մասնական ամբողջ գործված է քրիստոնէականների դէմ՝ հայկական բնֆօրմիստների առիթով և այդ էլ այն ատիճան, որ թիւրքաց կառավարութիւնը, եթէ ուղեւոր էլ՝ անկարող է զսպել այդ ֆանատիկոսութիւնը:

Եթէ Տրապիզոնի և Կ. Պօլսի կոտորածների ժամանակ մասնական ամբողջ կոտորէր քրիստոնէականներին, առանց խտրութիւն դնելու լուսաւորականի, կաթոլիկի, բողոքականի, տեղացու կամ եւրոպացու մէջ, ինչպէս այդ եղել է հետո անցեալներում,—այն ժամանակ, ճշմարիտ, կարելի էր հաւատալ, որ Մասնական հետեւները հասել են այն կատարութիւն, երբ մարդ այլ ևս ոչինչ չէ դանդաղանում, այլ միայն արիւն է ուղւում...

Ասկայն այդպիսի բան չը պատահեց ոչ Կ. Պօլսի, ոչ Տրապիզոնի, և ոչ էլ այն կոտորածներ ժամանակ, որոնք տեղի ունեցան վերջին օրերում: Որքան մինչև այժմ յայտնի է, Կ. Պօլսի կատարել ընդհարումներ ժամանակ թիւրք ամբողջը չը սպանեց և ոչ մի հատ եւրոպացի, նոյն իսկ ոչ մի հատ կաթոլիկ կամ բողոքական հայի: Իսկ Տրապիզոնի կոտորածի ժամանակ,—ոչ թէ եւրոպացի, կամ օսմանական չը զոհվեց, այլ նոյն իսկ թիւրք զինուորները և ամբողջ հաստատ զինավորութեամբ և համաձայն որոշ հրամանի, ձեռք չէին տալիս ոչ հայ-կաթոլիկներին, ոչ յոյներին, ոչ եւրոպացիներին, և ոչ նոյն իսկ ուսանողական լուսաւորական-հային:

Աւելի կասկած: Անպատեմբեր 26-ի կոտորածի ժամանակ, մի քանի հայ-կաթոլիկներ, առանց վտանգի, իրանց խանութները բաց պահեցին, իսկ մի ուսանողական հայ-լուսաւորական ընտանիք, նոյն իսկ թիւրք զինուորների աջակցութեամբ՝ քաղաքից տեղափոխվեց նաև... Աւելա-

«Այս բարենորոգութիւնները, որոնք պարծանքի գրքի մը խորագիրն ըլլալու արժանի են, կայս, միւս նախնականներուն համար ալ գործադրուելով պատճառ պիտի ըլլան կայս, հպատակներու բոլոր զատակարգներուն նորէն աւելի բարեբաւորել կացութիւն մը ընծայելու և վարչութեան կարգապահութեանը ոյժ տալու, ինչպէս նաև հանրային իրաւանց ու շահերու ամենակարգիւ հարցը մէկ քանի պատիւ պիտի ապահովեն:

«Այս բարենորոգութիւնը ամբողջովին կը համապատասխանէ օսմ. կառավարութեան ի վարուցանալի ունեցած ընթացքին, որ և է հաւասարութեան և իրաւանց պահպանութեան հիմնական ինքիքը, որով հարկ է, որ բոլոր ժողովուրդը նորէն բարեմաղթութիւնները ընէ Վեհ. Սուլթանին համար: Ուստի անկեղծութեամբ և երախտագիտութեամբ կը հրատարակենք Ն. Կ. Վեհափառութեան արդարաբարութեան և զթութեան այս նոր արարքը:»

«ԻԿՏԱՄԻ» ԶՅՈՒՆԱՐԸ

«Ատենէ մը ի վեր, հոս ու հնո, հայկական ինքիք անուամբ ինքիք մը հրապարակ նետուած է կարգ մը անձերու կողմէ, որոնք լուրեր հանելը իրենց բան գործ կընեն, ու այդ չափին մէջ ընթացողներուն համար երկար բարակ խօսակցութեանց առարկայ եղած են: Ատենք մոռնալով օսմանեան մշտադաւ պետութեան այնքան դարերէ ի վեր հաստատած քաղաքակրթիչ և վե-

ցրէք դրա վրա և այն, որ կատարել կոտորածի ժամանակ, եթէ մէկը ասում էր՝ «յոյն եմ», կամ «կաթոլիկ եմ», ազատ էր մնում վտանգից, այն ժամանակ պարզ կը լինի, որ այդ կոտորածը մասնական ամբողջի գրգռված ուղեղի արդիւնք էր, այլ չափ սահմանափակ, չափ զիտակցական, և չափ որոշ կարգադրութեան հետեւանք, և համաձայն այդ կարգադրութեան, թէ թիւրք զինուորները, թէ թիւրք ամբողջը պարտուած, սպանուած էին նրան, ով պատկանում էր զեաւուրներ երի հայ-լուսաւորական խմբին, ազատ թողնելով այն գեաւուրներին, որոնք հայ-լուսաւորական չեն, հետեւաբար, թիւրքը լօզգիկայով, Հայաստանի ազատութեան զինուորներ չեն...

Եւ այդ վատտերից յետոյ «քաղաքակրթիչ» եւրօպան էլի չարանակում է հաւատալ թիւրքաց կառավարութեանը, որը հաւատացնելով հաւատացնում է ամբողջ աշխարհին, թէ ինքը պատրաստ է ամեն տեսակ բարեքնքեր և բնֆօրմիստը հայերին, միայն թէ մասնական ժողովուրդը դէմ է, չէ ուղւում, և սպառնում է կոտորել թէ հայերին, թէ մինչև իսկ կառավարութեան պաշտօնականներին...

Խ. Մարտիան

ՀԱՅՈՅ ՀԱՐՅՈՐ ԵՒ ԴԻՊԼՈՄԱՏԻԱ

I Բանտերում

«Times» լրագրի խօսքով, Կ. Պօլսի անդլիական դեսպանութեան երկրորդ քարտուղարը, Բ. Դրան թոյլտուութեամբ, այցելեց Կ. Պօլսի բոլոր բանտերը և տեսաւ նրանց մէջ 300 բանտարկված հայերին (նրանցից 118 հիւանդանոցներում): Մի թիւրքաֆառայ, ձեռքապալկելով այն վայրկեան, երբ նա նամակ էր ուղարկում լօրդ Սօլսբիւրին, բանտարկվեց և երկու օրից յետոյ մեռաւ բանտում անյայտ պատճառից:

II Երկիրը

Վիեննայից, հոկտեմբերի 3/8-ից հեռագրում են «Daily News» լրագրին. «Ինչպէս լսվում է, Ռուսաստանը որոշել է իր զօրքով մտնել Հայաստան, հէնց որ քրիստոնէական նաւատորմը երեայ Բոսֆորի առաջը:

«Կ. Պօլսից եկած լուրերը հաստատում են, որ իլդիզ-կիօսկում պատրաստութիւններ են տեսնում ի դէպս, եթէ քրիստոնէական նաւատորմը մտնի Դարդանէլ, կամ Կ. Պօլսում ապստամբութիւն ծագի, սուլթանի կանաչքը և երեւանիքը պէտք է ուղարկվեն Ադրիանուպոլիս:»

III Ի տալա կանոնը

Խտակական կառավարութիւնը, հանգուցեալ կատարանի փոխարէն, Կ. Պօլսի նոր դեսպան է նշանակել կալվէր Պանասին: Հռօմից դէպի իր նոր պաշտօնատեղին մեկնելուց առաջ նա հրահանգ է ստացել Կրիստից,—ինչպէս հաղորդում են Հռօմից անդլիական լրագրիւններին,—հայոց

հանձն աշխարհաւորութիւնը, երբ իրական վիճակին հակառակ սա տեսակ սուտեր կը բռնն որպէս թէ օսմանեան պետութիւնը Հայաստան մը պէտի կաղմէ, թէ հայ իշխանապետութիւն մը պիտի հաստատէ, թէ ինքնօրինութիւն մը պիտի հիմնէ, և այլն և այլն:

«Օսմանեան կայսրութիւնը, սկիզբէն ի վեր, հաստատած ունի արդար օրէնքներ, որոնք բոլոր հպատակներուն հանգստութիւնը ու բարօրութիւնը կապահովէ: Արժեքի, ծէսի տարբերութիւնները երբեք կառավարութեան կողմէ չեն տեսնուել, այլ իր թիւին տակ զտնուող ամեն ազգերու և հասարակութեանց նկատմամբ կը վարուի հպատակաբար հոգածութեամբ և ամեն ժամանակ ալ հաստատած է նաև հարկ տեսնուած օրէնքները, ինչ որ կապացուցանէ իր ժողովուրդին երջանկութիւնը յարգարելու հոգը:

«Մեր օգտառաւոր ինքնակալը, իր նախնիքներուն նման, մտքէն չի հեռացնել իր ժողովրդին երջանկութիւնը և գիշեր ցօրեկ իր բոլոր հանգստութիւնը զոհելով այս կէտին, ճիշդ ու քանգրեք կը յատկացնէ երկրին ու տէրութեան վրկութիւնը ապահովելու: Այսքան հոգածութիւն երբ ակներե է, զարմանալի չէ որ կարգ մը ստայօղ լուրեր պայպէս տարածեն առանց զիտակու, անփորձի մը յատուկ անխել ջանքերով:

«Կրնանք բացարձակ կերպով յայտարարել թէ

հարցի վերաբերմամբ հետեւել անդլիական քաղաքականութեան և նախատել նրան:

IV Նոր պայմաններ

Կ. Պօլսից «Новости» լրագրին ի միջի այլոց հրում են հետեւեալը. «Եթէ մինչև այժմ չէ հրատարակված սուլթանի իրադէս Հայաստանի բնֆօրմիստներն ընդունելու մասին, այդ ուշանալը բացատրվում է նրանով, որ Բ. Դրանը զիմեց լօրդ Սօլսբիւրին և հարցրեց, թէ արդեօք երաշխաւորում է նա Օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը, երբ խոստացված բնֆօրմիստը գործ դրված կը լինի: Մինչև այժմ դեռ ևս պատասխան չը կայ:»

V Մարտի մասին

Կ. Պօլսից հեռագրում են հոկտեմբերի 10-ից. «Եթէ թիւրքաց լրագրիւններում տարգրված պաշտօնական հաղորդագրութեան մէջ չեն մըտցրված այն առանձին որոշումները, որոնց մտադրութիւն կար յիշատակել սուլթանի հրամանի մէջ, այն է՝ յանձնաժողովի, զիտաւոր կոմիտայի և նրա օգնականի նշանակումը, ներումն չնորհել յուլիսի 11-ից արտասահման փախած և արտրված բոլոր հայերին, բնֆօրմիստը մտցնել ամբողջ Անատոլիայում: Բացի դրանից հաղորդագրութեան մէջ չեն մտցրված այն կանոնները, որոնք վերաբերում են նախնադատներին և դաշմաւորներին հետ քրիստոնէայ խորհրդականներ նշանակելուն, այդ խորհրդականներին ընտրելու եղանակը, մի քանի մանրամասնութիւններ զաւառական և համայնական խորհուրդներին, տեղական դատարաններին, ուստիկանութեան և ժանդարմային ծառայութեան մասին, և քրիստոնէականից ու մասնականներին բնֆօրմիստը մտցնելուց: Այս վերաբերող յանձնաժողովի մասին, որի հետ պէտք է դեսպանները անմիջական յարաբերութիւններ հաստատեն իրանց թարգմանների միջոցով՝ բնֆօրմիստին վերաբերեալ օրէնքի սահմաններում:»

VI Քերբի

Կ. Պօլսից Ռուսաց գործակալութեանը հեռագրում են հոկտեմբերի 15-ից. «Անդլիական դեսպանը մի քանի շաբաթով արձակուրդ է առել և գնում է հինգշաբթի:»

Ֆէսի ԲէՑ

Հեռագրի մեջ արդէն հաղորդեց, որ Հայաստանի բարձրագոյն կոմիտայի նշանակվում ֆէսի Բէյ: «Нов. Время» լրագրից հետեւալ տեղեկութիւններն է ստացել այդ անձնաւորութեան մասին:

«Ֆէսի-Բէյ—Լիւթանանի նախնադատ Նաւում փաշա Ֆրանկօ-Կուզայի՝ արտաքին գործերի մինիստրութեան զեւանտան նախկին զինկետօրի (խարիջիէ) ճօրհրդօր որդին է: Բոլոր Ֆրանկօ-Կուզաները ծագումով սիրիականներ են, որոնք, ինչպէս յայտնի է, գլխավորապէս զաւանում են կաթոլիկ կրօնը: Մնւած են նրանք Հայէսում և մի փոքր խառնուրդ են կազմում Հայէս գաղթած եւրօպացիների հետ:

Ճշմարիտ չէ ոչ Հայաստանի մը յօրինումը, ոչ ալ իշխանապետութեան մը կամ ինքնօրինութիւն մը տրուելու նման խօսքերը: Տէրութեան ուղածն է ամենքն ալ հաւասարապէս և առանց բացառութեան երջանիկ ընել, և արդէն այս բանը սկսած է գործադրուիլ Սուլթան Ապտիւլ Մէճիտի և Սուլթան Ապտիւլ Ազիզի գահակալութիւններէն սկսեալ: Տէրութեան փախաքն է ի նկատի առնելով հանդերձ բնաւորութիւններու տարբերութիւնը և բնութեան պահանջները, բոլոր օսմանցիներուն միջև քաղաքական միութիւնը զօրացնելու, որով հետեւաբար, եթէ ընկուտ որոշուած բան մը կայ, այն ալ դարձաւ յառաջդիմութեանց համաձայն այդ օրէնքները ամբողջացնելն է:

«Բոլոր օսմանցիները այդ արդար օրէնքներուն առջին հաւասարապէս իրաւունքնին պիտի վայելեն: Մեր կառավարութեան խախաքն ալ երկրին այլազան տարրերուն միջև այս վայելումը ապահովել է, զոր արդէն իւրաքանչիւր անհատ տեսած ըլլալով չորհրդաւոր մնացած է:

«Երկրին բարեւաւան այս ձեռնարկին մէջ մաղի չափ չը պիտի զգուշի ոչ իսլամ և ոչ ալ միւս ժողովուրդներուն իրաւունքներուն: Եւ մինչև հիմա եղած անօրինութիւններն ալ ասիկա կը հաստատեն: Այս ճշմարտութիւնը ամենուր յայտնի եղած առեւն, վերոյիշեալ սուտերուն երեան հանուիլը պատուաբեր չէ իրենց պատկանած

«Ֆէսի Բէյի հայրը Լիւթանանի առաջին նախնադատն էր: Ֆէսի-Բէյի մեծ եղբայրը՝ Նէվիս-Բէյն, որպէս և ինքն Ֆէսի-Բէյն, թիւրքաց դեսպանութեան քարտուղար էր Պետերբուրգում: Իսկ միւս եղբայրը՝ Ֆէյզի-Բէյ, երկար ժամանակ թիւրքաց ընդհանուր հիւպատոս էր Թիֆլիսում:

«Ֆրանկօ-Կուզա եղբայրները եւրօպական կըրթութիւն ունեցող մարդիկ են և Կ. Պօլսում քրիստոնէականների և ոչ-քրիստոնէականների ընդհանուր յարգանքն են վայելում: Նրանք միշտ առանձնապէս սիրելի են եղել Կ. Պօլսի ֆրանսիական դեսպանութեանը, այդ պատճառով պէտք է կարծել, որ Հայաստանի բարձրագոյն կոմիտայի պաշտօնը արվում է ֆրանսիական դեսպանի ազդեցութեան չորհրդիւ:

«Հայաստանում բնակվող զխաւոր տարրերի հետ ոչինչ ցեղական կապեր չունենալով, Ֆէսի Բէյ, պէտք է կարծել, անկողմնապահ կը վերաբերվի բոլոր ազգութիւններին, և այդ պատճառով նրա ընտրութիւնը կարող է աճող համարվել:»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՅՏՐՆԵԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԶՕՐԵԼԵԱՆԸ

Վիեննայի Միթիթաբեան միաբնակները պատրաստութիւններ է տեսնում այս ամսի 22-ին տօնելու իր արքայօր Արքայ արքեպիսկոպոս Այտընեանի քահանայութեան և գրական գործունէութեան յիշատակայ յօրհանումը:

«Մշակի» անցեալ համարներում մենք ծանօթացրինք հայ հասարակութիւնը Այտընեանի կենսագրութեան և գրական գործունէութեան հետ. այժմ հարկաւոր ենք համարում նորից չեւտել այդ գործունէութեան զխաւոր կէտերը:

Իր կիսադարեան գրական գործունէութեամբ, իր բազմակողմանի հմտութիւններով՝ հայր Այտընեան ոչ միայն նպաստեց մեր լեզուն մաքրելուն, մեր լեզուագիտական ճաշակը զարգացնելուն, այլ և ինչնեց այն կամարը, որի վրայով լուսաւորական և կաթոլիկ հայերը հեռուհեռ մօտենում են իրար և միաբան աշխատում յօդուտ ազգային առաջադիմութեան:

Այտընեան մեր այժմեան գործածական աշխարհաբար լեզուի ակնաւոր մշակներից մէկն է եղել: Այն ժամանակ, երբ դեռ աշխարհաբարը գրականութեան մէջ քաղաքացիական իրաւունք չէր ստացել և համարվում էր գունդիկ, աղքատ, անգնատ լեզու, հայր Այտընեան զօրեղ պաշտպան հանդիսացաւ այդ հայածված լեզուին, ապացուցեց նրա աղին ծագումը, պատկանութիւնը և պիտանութիւնը գրական գործածութեան համար: Նրա «Բնական քերականութիւն արդի հայերէն լեզուի» աշխատանքները զարգացրելու եղաւ մեր այժմեան գրական լեզուի համար և ապագայց Այտընեանի խորին հմտութեան և լուսավոր հայեացքների:

Իբրեւ գեղարուեստագէտ՝ Այտընեան նոյնպէս

ազգութեան հաւատարիմ մասին որ մեծամասնութիւն կը կաղմէ: Ուստի կարգ մը չարամիտ զրոյցներ, որոնք զգուշեց կաղմէն բոլոր օսմանցիներուն և իրենց գործերովը զբաղող հայերուն:

«Ո՛հա ճշմարտութիւնը: Մեր առած ստոյգ տեղեկութիւնները սա են թէ Օսմանեան կառավարութեան ընկելը Տնօրինութիւնները Օսմանեան նախնականներուն մէջ քաղաքային վարչութեան, օստիկանութեան, ժանտարմայի, դատարաններուն և վերջապէս միւս գլխաւոր ճիւղերուն կը վերաբերին, որոնցմէ արդէն բոլոր օսմանեան զաւանդներն ալ հաւասարապէս արդէն կօդուրին:

«Կաւարտենք մեր խօսքը բարեմաղթութիւններ ընելով Վեհ. Սուլթանին համար:»

Պատրիարքը անհանդիստ է և դեռ տունն է, բայց այս օրերս կաղմէն: Լուր տարածուեցաւ թէ հինգ եպիսկոպոս միացեալ են պատրիարքը տապալելու, բայց կարծեմ սխալ է: Միայն Հմայեակ եպիսկոպոսը քանի մը մեքենայութիւններ ընել վորձեց, բայց չուտ խայտառակուեցաւ: Այդ մասին տեղեկութիւններ առնելով մօտերս կը գրեմ:

Նորանոր ձեռքակալութիւններ կը կատարւին, և ժողովուրդը նորէն սկսաւ Բերայի եկեղեցին հաւաքուիլ:

հաշմանոր ծառայութիւններ է մատուցել թէ՛ հայ տղազորական զորքին և թէ՛ հայ եկեղեցական երաժշտութեան: Նա ինքն նկարել և ձուրել է տուել այն ընտիր, գեղեցիկ, յարմար և ճաշակաւոր տառերը, որոնք այժմ սկսել են տարածվել և եւրօպացիներ չափազանց են ընդունում հայ տղազորական զորքին: Նա հին հայկական եկեղեցական երգեցողութիւնը և երաժշտական խաղերը տառնեակ տարիներ ուսումնասիրելով՝ եղանակաւորել է եւրօպական արդի երաժշտական ձևի վրա և իր այդ երաժշտական աշխատութիւնները լոյս է ընծայել երկու հատորով:

Բացի այդ զորքերից, որոնք իրաւունք են տալիս մեզ Այդրեանի անունը դասելու հայ ընտիր զորքիչների շարքում, մենք պէտք է չը մոռանանք և այն, որ նա, ընտրվելով Վիեննայի Միլիթարեանների արքայադ, բոլորովին նոր ուղղութիւն տուեց այդ միաբանութեան, որը նրա ղեկավարութեան ներքոյ թողեց իր նեղ կրօնական ուղղութիւնը և, իբրև զուտ գիտական հաստատութիւն, իր լուրջ աշխատութիւններով սկընեց լոյս ածել մեր լեզուի և մատենագրութեան վրա, մասնաւոր այն օրից, երբ հիմնվեց և մասնագիտական «Հանդէս Ամօրեայ» ամսագիրը:

Ինչպէս յայտնի է «Մշակի» ընթերցողներին, թիֆլիսում, Այդրեանի զործուհեութեան համակրող անձերի մի շրջանի մէջ, միտք էր յղացել մասնակցել հոկտեմբերի 22-ի տոնախմբութեան արժանաւոր կերպով և այդ առիթով մի փոքր մասնաժողով էր կազմված, բայց թիւրքալայում պատահած վերջին դէպքերը ստիպեցին մասնաժողովին յետաձգել առ այժմ յօդեկանի տոնախմբութիւնը թիֆլիսում և բաւականապէս միայն յօդեկանի օրը, հոկտեմբերի 22-ին, չնորհաւորական հեռագիրներ ուղարկելով:

Ահա համազօրեմ ենք, որ մեր գաւառական հայ ինտելիգենտ հասարակութիւնը ևս կը շտապի հեռագիրներով իր յարգանքը յայտնել հայր Այդրեանին, նրա համակրելի զործուհեութեան համար: Հեռագիր կարելի է ուղարկել հետեւեալ հասցեով: Wienne, Congrégation Mechitariste.

ՆԱՄԱԿ ԲԱՌՈՒՄԻՅ

Հոկտեմբերի 14-ին

«Կարմիր խաչի» ընկերութեան կողմից, Պետերբուրգից եկած կարգադրութեան համեմատ՝ երէկ, աւտորական չղգնաւոր, այստեղի մի ղրկուորական բժիշկ ուղարկվեց Տրապիզոն, բժշկական միջոցներով հանդերձ, անխնամ մնացած հայ վիրաւորեալներին օգնելու:

Տրապիզոնի ջարդի վերաբերութեամբ «Одесский Листок» լրագրի № 261-ի մէջ տպված է մի թղթակցութիւն, որ սկսվում է այսպէս. «Սեպտեմբերի 26-ին, ցերեկվայ ժամը 11-ին, տաճիկների զինակ մի խումբ, թուով 500 հոգի, դաւադած էր (առանց խափաղանքութեան) հայերին ջնջելով...» Ապա ստում է, որ տեղական վալին զորք և ոստիկաններ ուղարկեց և, գուցէ, հրամայել էր հայերին պաշտպանել, բայց իրողութիւնը այլ կերպ փոխվեց.—զինուորները թիւրքեր լինելով՝ իրանց եղբայրակիցների օրինակին հետեցին, նրանք սկսեցին ջարդել և կողոպտել հայերին:

Թէ վալին հայերի պաշտպանութեան ոչ մի փորձ չէ արել, այլ, ընդհակառակն, կողմնակի թէ՛ ուղղակի կերպով ինքն է եղել ստիպելին դրող և քաջաբերող՝ այդ շատ լաւ պարզվում է բազմաթիւ թղթակցութիւններով և եկուորականատեսների պատմածներով: Այստեղ, նոյն իսկ իրանք թիւրքերը խոտովանում են, որ հայերին ջարդելու հրամանը ուղղակի կ. Պօլսից է եղել:

Այդ ջարդի՝ հետզհետէ ստացվող մանրամասնութիւնները վերին աստիճանի քառմանի են և մարդ առանց վրդովվելու չէ կարողանում լսել: Պատմում են, որ մի խումբ հայեր ծառերի վրա թաքնված լինելով՝ հրացանի հարուածներով նրանց մի-մի վայր էին գլորում, ինչպէս թուշուներին...

Ս. Մ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ

Թիֆլիս, հոկտեմբերի 16-ին
«Մշակի» № 117-ի մէջ Շուշու ձեր թղթակի-

ցը, խօսելով քաղաքային ընտրութիւնների մասին, յայտնում է, որ իբրև թեկնածուներ քաղաքացիների պաշտօնի համար առաջարկվում են մի քանի անձինք, որոնց թուում և են:

Պարտք եմ համարում հրապարակով յայտնել, որ ես միանգամայն ցանկութիւն չունեմ քուէ-արկվելու այդ պաշտօնի համար:

Դրա հետ միասին, իբրև Շուշու քաղաքացի, բարոյական պարտք եմ համարում աւելացնել, որ առաջին անգամ քաղաքային ինքնակառու-թիւն մտցնվելով Շուշու, ցանկալի է որ քաղաքացիական ընտրվի մի այնպիսի անձ, որ ունենայ աւելի մեծ հմտութիւն և աւելի մեծ պատրաստութիւն:

Եւ որովհետեւ լրագիրների մէջ մի քանի թեկնածուներին անուններ են լսվում, ես առաջարկում եմ, որ Շուշու հատարակութիւնը նախապատրաստակար ժողովներ կազմի և այդ ժողովների մէջ լուրջ կերպով ըննելով կանդիդատների խնդիրը, կանգ առնի մի այնպիսի անձի վրա, որն ըստ ամենայնի համապատասխան լինէր քաղաքացիների պաշտօնին և կարողանար իրազորեմ մեր քաղաքի համար ինքնավարութեան բոլոր բարեքերը:

Ստեփան Խաղաչեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ

Թիֆլիս, հոկտեմբերի 3-ին

Խոնարհաբար խնդրում եմ բարեհաճէք տպագրել այս երկուող նամակը «Մշակի» համարներէց մէկում:

Գիտական անուն և հռչակ վայելելու նպատակով՝ մեր քահանաներից ոմանք էլ սկսել են գրական մի տեսակ գոգոլութիւն անել: Այս օրերս այդ քահանաներից մէկը, իր անցեալ զործերով ծանօթ Ներսէս քահանայ Ղամաղեանց, ներկայացրել է Վեհափառին մի աշխատասիրութիւն «Բարոյազգիք» վերնագրով և խնդրել է թոյլատրել տպարկելու: Այդ քաղաքագիրը յանձնվել է Սուրբաս արքեպիսկոպոս Պարգեանին քննելու և իր գեկուցումը նրա մասին յայտնելու Կաթողիկոսին: Սուրբաս արքեպիսկոպոսը իր գեկուցումն արել է ի նպատակ տէր Ներսէս Ղամաղեանի և Վեհափառը, այդ հիման վրա, հրամայել է տպագրել այդ քաղաքները հետզհետէ «Արարատ» ամսագրում և վարձատրել է յիշեալ քահանային լանջական խաչով, այլ և խոտացել է՝ մի քանի տեղեկութիւններ թիֆլիսի առաջնորդից ստանալուց յետոյ՝ չնորհել նրան և աւագ քահանայութեան պատու:

Այդ «Բարոյազգիք» աշխատասիրութիւնը ունի հետաքրքիր պատմութիւն: Դա պարունակում է իր մէջ 50 հատ քարտիկներ և, ասում են, զբրել, համառօտել և քաղուածօրէն կազմել է զահաղան քաղաքագրերից հանդուցեալ Արտաշէս Յակովբեանը՝ սրանից հինգ տարի առաջ: Նրա մահուանից յետոյ արտագրել է տէր Ներսէս Ղամաղեանը և սրբագրելու համար յանձնել է Գիտ քահանայ Աղանեանցին: Վերջինս սրբագրել, ուղղել է և մեծ մասը գրեթէ նորից չարագրել, որի համար ստացել է Ղամաղեան քահանայից, որպէս վարձատրութիւն, յիսուսն քուբէլի: Այդ կարմիր թանաքով սրբագրած թերթերը, մաքուր արտագրելու համար, յանձնվել է թիֆլիսի Մոզմու եկեղեցու թերապոս Գէորգ Թուրաղեանցին և իւրաքանչիւր թերթի համար վճարվել է նրան 50-ական կօպէկ: Գրքի առաջաբանն էլ, որ գրված է բաւական աջող չարագրել է ինքը Գիտ քահանայ Աղանեան:

Այս մի գիրք, որ գրել, չարագրել և սրբագրել են ուրիշները, բայց նրան ներկայացնում է մի ուրիշ անձնաւորութիւն և խնդրում է իրաւունք տալ տպագրելու, որպէս իր աշխատասիրութիւն, որի համար և վարձատրվում է: Միթէ սա գրական գոգոլութիւն չէ: Եթէ վարձատրութիւն պիտի արվի, այդ պէտք է ստանայ հանգուցեալ Արտաշէս Յակովբեանի թըշուառ ընտանիքը, որովհետեւ Վեհափառը, ինչպէս լուում ենք, բարեհաճել է «Արարատ» ամսագրում հետզհետէ տպագրել տալուց յետոյ՝ առանձին գրքովով հրատարակել և 1200 օրինակ տալ Ներսէս քահանայ Ղամաղեանցին, որպէս աշխատասիրողի, իր օգտին վաճառելու համար: «Գրական գոգոլութիւն» անել և վարձատրվել, —միթէ դա է արդարութիւնը:

Խնդրում ենք մեր այս նկատողութիւնը տպագրել առանց ստորագրութեան, որպէս զի անձ-

նական բանակուի առիթ չը տայ, որովհետեւ մեր նպատակը բանակուիւր չէ, այլ մի տգեղ փաստ մերկայանելու:

Նամակ

ՆԵՐՔԻՆ ԼՈՌԵՆ

Կ. Պօլսից մի մասնաւոր նամակով հաղորդում են հետեւեալը. «Հմայեակ եպիսկոպոս, Աշգեհանը, Ազգիանօպօլսի յայտնի Մեարով եպիսկոպոս, Մեղրիսեղէկ եպիսկոպոս և Բրուսայի նախկին առաջնորդ Բարթոլոմէոս եպիսկոպոս և ուրիշները ժողով են կազմել և վճռել են դիմել կառավարութեանը յայտնելու, թէ այս վերջին արիւնհեղութիւնների պատճառը պատրիարքն է, իսկ իրանք բոլորովին համաձայն չեն նրան և չարքաների առաջն առնելու համար խնդրում են, որ կառավարութիւնը պաշտօնից դրի պատրիարքին: Եւ եթէ այդ եկեղեցականները իրանց դիտաւորութիւնը գործարկելու համար պէտք եղած դիմումները չեն արել դեռ» պատճառը նա է, որ երկու են կրել «Եղեղափոխականները», որոնք շատ մասնիչներ սպանեցին վերջին ժամանակներս թէ Կ. Պօլսի և թէ գաւառներում:

Հոկտեմբերի 14-ին Կովկասի կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Շերեմետեվ ճանապարհ ընկաւ Աքսաթիւման, որտեղից կարճ ժամանակով կերթայ Բաթում:

Ահա երեք օր է, ինչ երկրագործութեան դեպարտամենտի դիրեկտոր Կոստիլեվը թիֆլիսում է և դարձված է այցելելով այն բոլոր հիմնարկութիւնները, որոնք գիւղատնտեսական զարգացման համար ունեն նշանակութիւն, այն է՝ չորամասպական կայարանը, բոտանիքական այգին, այգեգործական դպրոցը և այլն: Կոստիլեվը վաղը, չորեքշաբթի առաւօտը, կուղեւորվի Կարապազ՝ այնտեղի փորձնական կայարանը նայելու և նոյն օրը երկաթուղու սովորական գնացքով կը շարունակի իր ճանապարհը դէպի Բաթում:

Երէկ երեկոյան, հոկտեմբերի 16-ին, թիֆլիսի գուման կատարեց ուղարկվալի երկու անդամների ընտրութիւնը: Վերընարկեցին՝ Պ. Արզու-տինսկի՝ 45 ձայնով և Խվանենկօ՝ 35 ձայնով:

Կ. Պօլսի խառնակութիւնները, թիֆլիսում ստացված տեղեկութիւնների համեմատ, ազդեցութիւն ունեցան Երուսաղէմի և Նրա չլքալաների վրա: Մասնատակասները, տեղեկանալով Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքի մէջ տեղի ունեցած խառնակութիւնների մասին և ֆրանսիականութեամբ գրգռված՝ յարձակեցին հայերի վրա՝ կամենալով կողոպտել հայոց տաճարը: Հայերին պաշտպանեցին և ուրիշ ըրիտօնականները, որոնք միասնաբար հայերի հետ, դիմադրեցին թիւրքերին: Այդ ընդհարման ժամանակ սպանվեցին երկու հայ և հինգ մահմետականներ: Խառնակութիւնները միայն երկու ժամ տևեցին: Պետութիւնների ներկայացուցիչները պահանջեցին ապահովութիւն ըրիտօնականների համար:

Մենք արդէն հաղորդեցինք, որ Գանձակի նահանգապետը դիմել էր Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան, որպէս զի սա բանայ իր ձեռքը Գանձակում: Գիւղատնտեսական ընկերութիւնը համապիտեմամբ վերաբերվեց այդ առաջարկին և դիմեց կառավարչապետին: Այժմ Գիւղատնտեսական ընկերութիւնը ստացել է կառավարչապետից տեղեկութիւն, որ նրա կողմից ոչ մի արգելք չէ կարող լինել, ուրեմն ընկերութեան խորհուրդը կարող է որոշում կայացնել Գանձակի ձեռքի բացման մասին:

Մեզ հաղորդում են, որ հոկտեմբերի 15-ին, երեկոյան մօտ 10 ժամին, Աւաղա կայարանի մօտ՝ մի ուս որդ ընկաւ երկվարուղու գնացքի տակ և մեռաւ: Կարծում են, որ յանցաւորը մեքենավարն է, որ կայարանի մօտ չէր դանդաղացրել գնացքի արագութիւնը, ինչպէս այդ միշտ լինում է:

Մենք ստացանք մի նոր գիրք՝ «Տաճկահայ» վերնագրով, աշխատութիւն Բաթիֆի: Դա մի չափ յօդուածների ժողովածու է, հայոց հարցի մասին, գրված 80-ական թվականներին և լոյս է տեսնում բաւական pendant: Գրքի հրատարակի-

չը, հեղինակի այրին, և ոչ մի խօսք չէ ասում, թէ արդեօք այդ յօդուածները անտիպ են եղել, թէ տպագրված: Մեզ թվում է, որ այդ յօդուածները արտատպվել են «Մշակից»:

Կիւտեմբերի եկեղեցում, վրաց ինտելիգենցիայի նախաձեռնութեամբ, երէկ հոգեհանգիստ պէտք է կատարվէր վրաց բանաստեղծ Իշխան Ն. Բաբաթովի համար՝ նրա մահվան յիսնամեակի լրանալու պատճառով:

Կիրակի, հոկտեմբերի 15-ին, Գաբաշվիկայա փողոցի վրա, անձնատպանութիւն գործեց մի չէի նօվնիկ, որը վերջերս ծառայում էր Կարսի նոր կառուցվող երկաթուղու վրա և այս օրերս եկել էր թիֆլիս՝ բանաւորներին փող տալու համար: Անձնատպանութեան պատճառը, ինչպէս ասում են, գանձարանի փողերի վաճառումն է:

Նորերս Պետերբուրգում վախճանվեց Ն. Ստասովա, կանանց բարձրագոյն կուրսերի հիմնադիրը Պետերբուրգում: Այդ համլրելի կնոջ մահը մեծ ցաւ պատճառեց Ռուսաստանի ինտելիգենտ հասարակութեան և մասնաւոր այն կանանց, որոնք հանդուցեալ Ստասովայի նորով, կարողացել են բարձրագոյն ուսում առնել: Կիրակի, հոկտեմբերի 15-ին, թիֆլիսում, Ռուսաց զինուորական տաճարում հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալի համար: Հոգեհանգուցին ներկայ էին բազմաթիւ հասարակութիւն, բարձրագոյն կուրսերի նախկին ուսնիչները, իրական դիմաւորաների ուսուցչուհիները, ուսուցիչները և աշակերտուհիները:

Թէհրանից «Тифли. Листок» լրագրին հաղորդում են, որ անդիլադները զահաժառանգութեան խնդիր յարուցին Պարսկաստանում, ապացուցանելով ժողովրդին, որ Ազրբեյջանի ընդհանուր նահանգապետը Շահի զահաժառանգ չէ, այլ օրինական ժառանգն է Շահի երկրորդ որդին, որին Անդլիան հովանաւորում է: Շիա հոգեւորականութիւնը վրդովված է Անդլիայի դէմ: Գրութիւնը երկրպայի է Շահ թէհրան կանչեց իր երկրորդ որդուն բացառութիւնների համար, բայց այդ վերջինը չը կատարեց իր հօր պահանջները՝ հիւանդ ձեռնադրվելով:

Ի.Գ.Ի.Ի.Յ լուր է ստացված, որ Բայազետում նոյնպէս սկսել են հայերին կոտորել. թիւրքերի և քրդերի կոտորածից մի քանի հայեր հաղիւ աղաւթվել են և փակել ուսուց սահմանը:

Վ.Ա.Գ.ԱՐՇԱՊԱՏԻՅ մեզ գրում են, «Ամսիս 8-ին, գիրքը, վաղարշապատի այգիներում խեղդամահ էին արել մի տեղացի երիտասարդի և զցել տանուէրի այգու մօտ: Չարագործները դեռ չեն բռնված»:

ԲԱԳՈՒԻՅ «Приаз. Край» լրագրին հաղորդում են, որ Ապշեթոնեան թերակղզու վրա սեպտեմբեր ամսվայ ընթացքում 24 միլիոն ութ հարիւր հազար պուլը նուրթ է ստացված:

ԱՆԼԻՔԱՆԿՈՊՈՒՅ «Нов. Обзорение» լրագրին հետադրում են հոկտեմբերի 15-ին, «Երէկ ալստեղ առաջադրութիւն ստացվեց՝ անյապաղ քաղաքային կանոնադրութիւն մտցնել Ալեքսանդրօպօլսում»:

Վ.Ա.Գ.ԱՐՇԱՊԱՏԻՅ մեզ գրում են, «Մեր երկսեռ դպրոցները թէ՛ն բացված են, բայց կանոնաւոր դաստասութիւն դեռ չէ սկսված: Զարմանալի այն է, որ մեր դպրոցների հոգաբարձու մի արգելք չէ կարող լինել, ուրեմն ընկերութեան խորհուրդը կարող է որոշում կայացնել Գանձակի ձեռքի բացման մասին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒԷԴԻԱՅԻՅ

Սո օ կ հ օ յ լ մ, հոկտեմբերի 5-ին
Հայերին համակրող եւրօպական ազգերի թուումն են նոյնպէս Սկանդինավեան ազգերը: Անցեալ տարվանից սկսած սրանց լրագիրները համարեա միշտ լին են համակրական յօդուածներով դէպի հայերը: Առանձին ուշադրութեան արժանի էին Ստոկհօլմի ամենապատկառելի ամսագրը «Aftonbladet» լրագրի մէջ անցեալ տարվայ նոյեմբերի 21-ին և հեկտեմբերի 19-ին՝ Ստոկհոլմի կոտորածի վերա-

Типографія Канцел. Главн.нач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. кан.